Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2641

244
0-89

1883

33

ՕՐՀՆԵԱԼ ՄԱՏԵԱՆԸ

معارف عمومیه نظارت جلیله‌سنك رخصتیله طبع اولنمشدر
مصارف آمریقان مسیونر شرکتی طرفندن تسویه اولنه‌رق
١٦ ربیع‌الاخر ٣٠٠ و ١٢ شباط ٩٨ تومرو ١٠١٦

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ

1883

244
0-89

2001

2010

244
0 – 89

52771-ա



39422-67

ՕՐՀՆԵԱԼ ՄԱՏԵԱՆԸ

Այն նշանաւոր և բարի արքայն՝ որ շատ տարիներ առաջ ապրեցաւ, յաճախ կը յիշատակէ օրհնեալ մատեան մը, որոյ հրաշալի ազդեցութիւնը թէ իւր անձին և թէ այլոց յիշելով, կ'ըսէ. "Պատուական է ինձ քան զոսկի, այո՛, ցանկալի է քան զտեսալ ոսկի։" Դարձեալ՝ "Լաւ է ինձ քան հազարաւոր ոսկի և արծաթ։" Սաղմ. ՃԺԹ. 72։ Ցեսնենք սակայն թէ ինչ ըրած էր Դաւթի այս օրհնեալ մատեանը։ Անոր միտքն, ուրիշ մարդոց մտաց պէս խաւարի մէջ էր, և այս օրհնեալ մատեանն լուսաւորեց զայն։ "Քու խօսքդ, կ'ըսէ, ոտիս ճրագ է, և շաւիղներուս լոյս։" Սաղմ. ՃԺԹ. 105։ Դաւիթ այս մատենին միջոցաւ տեսաւ Աստուծոյ անհուն բարութիւնը և փառքը, ինչպէս նաև իւր սիրտը։ Այն մատենին լուսով ճանչցաւ իւր մեղքը և ամօթը։ Այն գիրքը ցուցուց կենաց ճամբան Դաւթի, որ տեսաւ թէ ինչ ճամբայ երթալու էր, և ինչ տեղերէ պահելու էր իւր ոտքը։ Այն գիրքն ըրաւ այս ամէն բարիք Դաւթի, և Դաւիթ քաջ գիտցաւ թէ ինչ որ ըրաւ անոր, կարող էր ընել նաև այլոց։ Երիտասարդը կա-

բող է "մաքրել իւր ճամբան." զգուշութեամբ անսալով այն գրքին, և չափահաս մարդը՝ հաճոյք և մխիթարութիւն գտնել անով, և յաջողիլ իբրև ծառ որ անկուած է ի գնացս ջուրց, և որոյ տերևները երբէք չեն թառամիր։ Սակայն ոչ ոք ի բնէ կը սիրէ և կը յարգէ այն օրհնեալ մատեանը, բայց եթէ յաստուածուստ սորվի այսպէս ընել։ Եւ սակայն Աստուած այնչափ և այնպիսի խմաստութեամբ կը սիրէ զմարդ, որ երբ մարդ չյօժարիր բանալ իւր ականջը լսելու անոր հրամանը որ կ'ըսէ, "քննեցէք զգիրս." (Յովհ. Ե. 39։) և, "Այս իմ խօսքերս ձեր սրտին և հոգւոյն մէջ դրէք," (Բ Օր. ԺԱ. 18։) Աստուած շատ անգամ կը չարժէ իւր դաւազանը, որպէս զի մարդ ուսանի Աստուծոյ դասը, զոր շատք կը դանդաղին ուսանիլ, այսինքն ուսանիլ թէ ո՞րչափ կարօտ են Աստուծոյ խօսքին, և ի՞նչ մեծամեծ օգուտներ կրնան քաղել պարապելով անոր ուսման։

Իբրև օրինակ յառաջ կը բերեմ հոս հարաւային Իրլանտա բնակող մարդ մը։ Սա դրաւ իւր որդին մերձակայ գիւղի մը դպրոցը, ուր սովորութիւն էր Սուրբ գիրք կարդացունել աշակերտաց։ Այս մարդը կը կարծէր թէ որդին կենաց ընդարձակ և երկար ասպարէզ մը ունէր իրեն առջև, և շատ երկար պիտի ապրէր։ Սակայն, որովհետև սովոր չէր հանդերձեալ կենաց վրայ խորհիլ, անփոյթ էր այդ մասին. կը փափաքէր միայն որ տղան երջանիկ ըլլար, և յաջող ապագայ ունենար աշխարհի վրայ։ Այս մարդը միտ դրած չէր Փրկչին խրատուն թէ, "Առաջ խնդրեցէք Աստուծոյ թագաւորութիւնը և անոր արդարութիւնը, և ձեզի պիտի տրուի այդ բոլոր բաները" որոց կարօտ էք։ Մատթ. Զ. 33։

Այս պատուական կանոն է, զոր ծնողք պարտին բռնել առաջնորդ կենաց նաւակը վարելու, որպէս զի օգտին իրենք և իրենց զաւակները, թէ այս և թէ հանդերձեալ աշխարհին մէջ։ Սակայն կ'երևի թէ վերոյիշեալ հայրն այսպէս չէր ըներ. յարմար դատեց այդ դպրոցը դնել որդին գիտութիւն և մանաւանդ հաշիւ սորվելու, վասն զի անոր գիտաւորութիւնն էր դնել որդին այնպիսի գործի մը ուր հաշիւ գիտնալ հարկաւոր էր։ Տղուն դպրոց երթալէն քանի օր եռքը, ինքն ևս գնաց և խնդրեց ուսուցչէն Սուրբ գիրք կարդալ չըտալ իւր որդւոյն, "Քանզի," ըսաւ, "իմ մեծ փափաքս է որ տղան իւր բոլոր ժամանակը տայ հաշիւ սորվելու, և քաջ սորվի զայն։"

երբ տեսաւ թէ ուսուցիչը չէր զիջաներ անոր կամաց, հանելով որդին այն դպրոցէն՝ ղրկեց զնա ուրիշ դպրոց, ուր կարդալ, գրել և հաշուել միայն կը սորվեցուներին, Սուրբ գիրք կարդացուներ չկար։ Սակայն այս ողորմելի հայրը ժամանակ մը եռքը տեսաւ թէ հոն ևս չհասաւ իւր նպատակին, քանզի տղան հաշուադիտութեան մէջ յառաջ չգնաց, ուստի ստիպուեցաւ դարձեալ ղրկել զնա միւս դըպրոցը, ուր տղան ոչ միայն յառաջ գնաց արտաքին ուսմանց և հաշուադիտութեան մէջ, այլ և Աստուծոյ խօսքը կարդալով և սորվելով, եղաւ ճշմարտապէս նորոգեալ պատանի մը։

Յետ սակաւ ժամանակի այս տղան կառքէ ինկաւ և այնպէս չարաչար ջնասուեցաւ, որ երեսուն ժամ միայն ապրելով, պանդոկի մը մէջ մեռաւ։ Տղան մօտ տեսնելով իւր վախճանը, բերել տուաւ հայրը, այն հայրը որ ժամանակաւ իրրև անպէտ արդիլած էր անոր Սուրբ գիրք կարդալ և ուսանիլ։ Երբ հայրը եկաւ, "Հա՛յր," ըսաւ որդին, "Աստուծոյ խօսքը զոր ես ուսայ վարժարանիս մէջ, մեծ օրհնութիւն եղաւ ինձ. ահա կը մեռնիմ քրիստոնէական երջանիկ մահուամբ, քանզի դիտեմ և ստոյգ եմ թէ սիրելի Փրկչիս կ'երթամ, բայց հա՛յր, վերջին խնդիրք մը ունիմ ընել քեզ, այսինքն թէ կարդաս Աստուծոյ խօսքը միշտ աղօթիւք։ Տարակոյս չունիմ թէ օրհնութեամբն Աստուծոյ այս պիտի ըլլայ միջոց փրկութեան հոգւոյդ։ Մի՛ մոռնար, հայր, որ մենք կը փրկուինք, ոչ թէ զմեզ քրիստոնեայ անուանելով և բերանով միայն դաւանելով զՔրիստոս, այլ ունենալով մեր սրտին մէջ այն կենդանի հաւատքը որ կ'ազդէ մինչև հոգւոյն խորը Հոգւով Սրբով, և միայն կարող է նորոգել զմեզ, և տանիլ յերկինս։"

Տղուն այս վերջին խօսքը և ջերմ աղերսն այնպէս թափանցեց հօրը տրտմած հոգւոյն, որ այնուհետև չկրցաւ հակառակիլ Սուրբ Գրոց ընթերցման զոր այնպէս եռանդագին յանձնեց որդին իւր վերջին ժամուն, և իրրև նշան շնորհակալութեան, որդւոյն թաղման երեկոյին, ոսկի մը ղրկեց դպրոցին տեսուչներուն, շնորհակալ ըլլալով անոնց որ որդին այն դպրոցին մէջ սորվելով Աստուծոյ խօսքը մեռաւ երջանիկ մահուամբ։

Իմ տեղեկութիւնս աւելի յառաջ չերթար. հօրը ապադայ վարուց վրայ բան չեմ գիտեր, կը յուսամ սակայն թէ նա կատարեց իւր որդւոյն այն վերջին չահաւէտ խնդիրը, կարդաց Աստուծոյ խօսքը հանապազ, և խնդրեց

Հոգւոյն Սրբոյ առաջնորդութիւնը։ Ով որ կը վարվաքի իւր անձին փրկութիւն, թող բերնուց սորվի և ընէ միշտ սա կարճ աղօթքը. "Ով Տէր Աստուած, վասն անուան Յիսուսի շնորհէ ինձ զՀոգիդ Սուրբ, որ ընէ զիս որդի Աստուծոյ և պատրաստէ զիս յաւիտենական փառաց։"

Իսկ թէ այս դէպքը զոր համառօտիւ պատմեցի՝ զարթուցանէ եռանդ ծնողաց սրտին մէջ, և տայ անոնց քան զամենայն ինչ նախամեծար համարել կրթել իրենց զաւկներն ի հոգևորս, ջանալով "ի մանկութենէ" խմաստուն ընել զնոսա ի Սուրբ գիրս։ Երբ անոնց համար դպրոց կ'ընտրեն, նային որ այն օրհնեալ մատեանը դպրոցին ուսմանց կարգին մէջ առաջին տեղը բռնած ըլլայ, և կարդալ տրուի այն տղայոց, ոչ իբրև սովորութենէ, այլ խնամով և փութով։ Նաև իրենք ևս մանաւոր հոգ տանին տան մէջ յարմար ժամանակ կարդալ և ըստ կարի մեկնել զայն իրենց զաւկներուն, և ստէպ աղօթել անոնց հետ որ Տէրը բանայ թէ իրենց և թէ իրենց զաւկներուն միտքը, որպէս զի կարենան հասկընալ և ըմբռնել Աստուծոյ խօսքին ճշմարիտ խմաստը։ Ծնողք պարտին ցուցնել և զգացուցնել իրենց զաւակաց թէ շատ կը սիրեն

այն Սուրբ մատեանը, թէ քան ամէն երկրաւոր բարիք գերազանց կը համարին զայն, թէ իրենց այս մահկանացու կենաց մէջ այն է իրենց լոյս և առաջնորդ, և թէ մեծ հաճոյք կ'զգան երբ կը խորհին թէ մահը կարող չէ կորզել անոնց սրտէն այն գիրքին ճշմարտութիւնները, քանզի այն ճշմարտութիւնք անջինջ պիտի մնան անոնց մտաց մէջ յաւիտեան, և փրկիչը զոր այս գիրքը յայտնած է անոնց՝ պիտի ըլլայ անոնց լոյս, փառք և մեծագոյն վարձք։

"Բու վկայութիւններդ, կ'ըսէ Դաւիթ, յաւիտեան ինձ ժառանգութիւն առի, քանզի նոքա իմ սրտիս ցնծութիւնն են։" Սաղմ. ՃԺԹ. 111։ Եւ մեր բարերար Տէրը կ'ըսէ. "Քննեցէք զգիրս, քանզի դուք կը համարիք նովաւ յաւիտենական կեանք ունենալ, և բուն անոնք են որ վասն իմ կը վկայեն։" Յովհ. Ե. 39։

ՄԵՍՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Б. блиотека
ՀԱՍՊ-Арм ССР
им. А. Мас

2641

<< Ազգային գրադարան

NL0029504

9565